

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին ատղիտի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.1-10)

* Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է ներքին ատղիտի իրականացման տարեկան ծրագրի կազմման աշխատանքներին, ներքին ատղիտի անցկացման աշխատանքներին, ատղիտի ավարտից հետո կազմում է հաշվետվություն, նախապես այն քննարկելով ատղիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ.

* իրականացնում է ներքին ատղիտի տարեկան ծրագիրը

* ատղիտի ընթացում բացահայտված կեղծիքի նշանների, ատղիտի սահմանափակումների վերաբերյալ անհապաղ տեղեկացնում է Բաժնի պետին,

* իր կողմից իրականացված յուրաքանչյուր ատղիտի համար պատրաստում է ատղիտի հաշվետվություն և ներկայացնում է Բաժնի պետին,

* հետևում է ներքին ատղիտի ստանդարտներին, ներքին ատղիտի վարքագծի կանոններին, ներքին ատղիտի կանոնակարգին, ներքին ատղիտի ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությանը,

* իրականացնում է հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունների բացահայտում և ճշգրտում

Մրցույթը կկայանա 21.05.2013 թ. ժամը 12:00-ին, Բ.Եղեգնաձոր:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

* տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով կամ իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն

* քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի օրօ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

* ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

* տիրապետում է անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների (Ցանկեր N 1-2):

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Վայոց ձորի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

* դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

* տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետկամ տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ներքին), վկայականի(ներքին), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.

* մեկ լուսանկար՝ 3x4 չափսի

* անձնագրի և անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-ից 18:00

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2013թ ապրիլի 25 -ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետարան

/ հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5, հեռ 2-22-52, 2-55-95/: